

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐՈՒՆՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՁԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«20» հուլիսի 2015թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հունվարի 21-ի N 2 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժին՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, զարգացման ծրագրերի վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի, ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Բարձրունու գյուղական համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, առևտրի և ծառայությունների, արտակարգ իրավիճակների, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:


1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Բարձրունու գյուղական համայնքի ղեկավարին:


Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)


/ստորագրություն/


Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Յողիկ Բաբայան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Լյուսյա Պողոսյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սմբատ Խլիսաթյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Գոհար Խաչատրյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Արամ Կոստանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Նարինե Մաղաքյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Գագիկ Գևորգյան (Բարձրունու գյուղական համայնքի ղեկավար)


/ստորագրություն/

2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ վայոց ձորի մարզի Բարձրունու գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

Բարձրունու գյուղական համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Բնակչության տարահանման պլանավորում և կազմակերպում. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողով, տարահանման հանձնաժողովի հաստատված կանոնադրություն, տարահանման հանձնաժողովի կողմից մշակված տարահանման պլան	V Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծվել են տարահանման մարմիններ, հաստատվել է տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը		Տարահանման պլան չի մշակվել, քանի որ չի պահանջվել	ՀՀ կառավարության 2011թ թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը սահմանելու մասին» N1180-Ն որոշման 16-րդ կետը, համաձայն, որի պետք է մշակվեր տարահանման պլան	առաջարկվում է մշակել տարահանման պլանը համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ	մինչև 01.01.2016թ
2. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան			V պլանը չի մշակվել, քանի որ չի պահանջվել	Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը չի մշակվել, չեն կատարվել ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշման 3-րդ կետը	առաջարկվում է մշակել միջոցառումների պլանը համագործակցելով ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ	մինչև 01.01.2016թ
3. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան			V պլանը չի մշակվել,	Պլանը չի մշակվել, չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները	առաջարկվում է մշակել պլանը սահմանված կարգով	մինչև 01.01.2016թ
4. Համայնքների ղեկավարների		V		Չեն պահպանվել	Ֆինանսական	Ֆինանսական

<p>կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>		<p>Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ</p>		<p>ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ</p>	<p>հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p>	<p>հնարավորությունների առկայության ժամանակ</p>
<p>5. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում</p>			<p>V Համայնքի զարգացման սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները՝ համաձայն որի համայնքի զարգացման ծրագրում պետք է ներառված լինեն սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	<p>Առաջարկվել է համայնքի ապագա զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	

Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.</p> <p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների</p>		<p>V ՀՀ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամներին համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներին,</p>		<p>Թեքահարթակ չկա՝ համայնքապետարանում և մշակույթի տանը, <u>չեն պահպանվել</u> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Առաջարկվել է թեքահարթակ կառուցել</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում</p>

<p>համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ:</p> <p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ:</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ:</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p>	<p>բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը>>:</p>				
---	--	--	--	--	--

Հավելված 3. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն:</p>			<p>Վ << Համայնքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան >>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է իր կանոնակարգը:</p>	<p>Առաջարկվել է հաստատել ավագանու կանոնակարգը</p>	<p>1 ամիս</p>
<p>2. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ առկայություն:</p>			<p>Վ << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ>>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները ուղղությամբ</p>	<p>1 ամիս</p>
<p>3. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>Վ << Համայնքի ավագանին հաստատում է</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու</p>	<p>Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը</p>

			<p>համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:</p>	<p>ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ</p>	<p>ուղղությամբ</p>	
<p>4. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>		<p>V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի հողերի օգտագործման սխեմաները>>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28.1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի հողերի օգտագործման սխեմաները</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը</p>	
<p>5. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>		<p>V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը >>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>1 ամիս</p>	
<p>6. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշում</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>	
<p>7. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>	

		ձևավորման կարգը >>:	գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ		
8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:		v Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը	Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս
9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:		v <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:	Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս
10. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:		v <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:	Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ	Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով	1 ամիս